ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀԿԳՆԳՀԱՊՁԲ-19/15-1

ք. Երևան «05» 08 2019թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Ն. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Աստղիկ Գրատուն>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Չունգուրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Պատվիրատուին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Կատարողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Կատարողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Կատարողից պահանջել հատուցելու վնասները, եթե Պատվիրատուն Կատարողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողը էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ընտրել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Կատարողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Կատարողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Կատարողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Կատարողը իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Պատվիրատուի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Պատվիրատուն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Պատվիրատուի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Պատվիրատուի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պատվիրատուին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Պատվիրատուին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Պատվիրատուին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Պատվիրատուի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Պատվիրատուի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Կատարողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Պատվիրատուին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Պատվիրատուին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 14767200 (տասնչորս միլիոն յոթ հարյուր վաթսունյոթ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Կատարողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

3.3 Պատվիրատուն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Կատարողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթ, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանների պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կատարողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Կատարողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ. ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի **N 1, N 2 հավելվածները**, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Աստղիկ Գրատուն ՍՊԸ
Ք. Երևան, Կառավարական տուն 2	ք.Երևան, Նորք 2-րդ, 32տ.
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Կոնսերտ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011022622	Հ/Հ 19300657509901000
ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ 01505177
Գլխավոր քարտուղար	Տնօրեն Ս. Չուանգուրյան
Ն. Հարությունյան	Կ.Տ.
/ստորագրություն/	
Կ.Տ	

Հավելված N 1
«05» 08 2019թ. կնքված
ՀՀԿԳՆԳՀԱՊՁԲ-19/15-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափաբաժինները	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ Դասակարգման (CPV)	Ապրանքի							
		Անվանումը, ապրանքային նշանը	Արտադրողը, ծագման երկիրը	Տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	քանակը	միավորի գինը, ՀՀ դրամ	ընդամենը գինը, ՀՀ դրամ	Մատակարարման Ժամկետը*
1	22111120/11	Գրադարանի գրքեր-1, «Հետաքրքրաշարժ թվաբանություն» գիրք	<<Աստղիկ Գրատուն>> ՍՊԸ, ՀՀ	**Նախատեսվում է ձեռք բերել «Հետաքրքրաշարժ թվաբանություն» գիրքը, որն ունի հետևյալ բովանդակությունը՝** **1. Թվային օրինաչափություններ** Այս բաժնում ներկայացվում են զանազան թվային օրինաչափություններ, որոնց հիմքում թվաբանական չորս գործողություններն են իրենց անսպասելի հատկություններով: Տրվում են թե տեսական հիմնավորումներ, թե լուծելու համար առաջադրանքներ: **2. Մտապահված թվի գուշակում** Որպես մտավարժանք ներկայացվում են զանազան մտապահված թվերի գուշակումներ, բացահայտվում են դրանց գտնելու ներքին մեխանիզմները, ինչը հնարավորություն է ընձեռում, որ երեխաներն իրենք հորինեն նման խաղ-խնդիրներ: **3. Տառաթվային ծածկագրեր** Տրամաբանական և ոչ ստանդարտ մտածողության զարգացման համար ամենաստվերական սյունակային գումարումները ներկայացվում են թվաբանական խաղ վարժանքների ձևով: Թվաբանական խաղ վարժանքների ձևով ներակայցված գումարելիները և գումարը իրար հետ կապված են ոչ միայն թվային, այլև բառիմաստային առնչություններով: (Օրինակ՝ գումարելով ԳԱՅԼԵՐ, ստանում ես ՈՀՄԱԿ՝ գումարում ես ԾԱՂԻԿՆԵՐ, ստանում ես ԳԱՐՈՒՆ, և այլն:) Խաղ-առաջադրանքները պետք է լինեն գրավիչ թե՛ իրենց պարզությամբ ու գեղեցկությամբ, այլև տրամաբանելու, թվերի աշխարհի գիտելիքները անսովոր միջավայրում կիրառելու համար: **4. Թվաբանական գործողություններով թվերի ստացում** Թվաբանական վարժությունների նման համակարգը պետք է լինի	հատ	1400	5274	7383600	Ոչ շուտ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20-րդ օրացուցային օրը մինչև ս.թ. դեկտեմբերի 15-ը

				գրավիչ և պարունակի թվերի հետ աշխատելու հետաքրքրություն: Պետք է նպաստի մաթեմատիկական և տրամաբանական գիտելիքների գործնական կիրառմանը և զարգացնի երեխայի երևակայությունը, մտածողությունն ու համառ, երկարատև և լարված աշխատելու ունակությունները: **5. Հետաքրքրաշարժ, ոչ ստանդարտ լուծումներ պահանջող խնդիրներ և առաջադրանքներ:** Ներկայացված խնդիրները, առաջադրանքները և դրանց լուծումները պահանջում են առանց հանրահաշվական մեթոդների դիմելու տրամաբանական և ոչ ստանդարտ մտածողություն, ինչը հնարավորություն պետք է տա թափանցել առարկաների ու երևույթների անտվոր կապերի ու առնչությունների մեջ, պետք է զարգացնի լուծումները բացահայտելու կամք և առողջ հետաքրքրասիրություն: **6. Առաջադրանքներ հաշվեձողիկներով** Հաշվեձողիկներով առաջադրանքները և դրանց լուծումները պետք է լինեն դժվարավուն, հետաքրքրական և համակարգված: Խթանում են երեխաների հետաքրքրասիրությունը և ոչ ստանդարտ մտածողությունը: Պետք է լինեն թվաբանական բանավոր հաշվումների մեջ հմտանալու հիանալի միջոց: **7. Թվաշարքում «ավելորդի» հայտնաբերում** Ներկայացված առաջադրանքը կատարելու համար թվերից, բառերից, պատկերներից առանձնացվում է այն մեկը, որը «չի մերվում» մնացածներին, որոնք իրար հետ կապված են որևէ ընդհանուր հատկանիշով: Այդ հատկանիշը խաղից խաղ փոխվում է: Այս խաղը պետք է նպաստի առարկաները որևէ ընդհանուր հատկանիշով խմբավորելու երեխաների կարողության զարգացմանը: Այս խաղին համեմատվում են մի քանի առարկաներ իրար հետ և առաջադրվում է հարց, թե ինչ նմանություն և ինչ տարբերություն կա նրանց միջև: Առարկաների համեմատությունը կարելի է սկսել երկուսից և աստիճանաբար ավելացնել դրանց քանակը: (Օրինակ՝ կարելի է վերցնել երկու գնդիկ՝ մեկը սև, մյուսն՝ սպիտակ, և երեխաների հետ պարզել, որ երկու գնդիկը նման են իրար իրենց կլորությամբ, բայց տարբեր են գույնով: Այնուհետև կարելի է վերցնել երեք սպիտակ, մեկ սև գնդիկ: Պետք է բացատրել, որ երեք գնդիկները գույնով նման են իրար, իսկ մեկը սև է, նման չէ դրանց: Կարելի է վերցնել երեք սև, մեկ սպիտակ գնդիկ և մեկ խորանարդիկ, ապա բացատրել, որ գնդիկները կլոր են և դրանով իրար նման՝ անկախ գույնից, իսկ խորանարդը կլոր չէ, ուստի ավելորդ է): Նպաստում է, որ երեխան կարողանա տարբերել առարկաների առանձնահատկությունները և ընդհանրությունները, օրինակ. տրված թվերը, պատկերները, առարկաները որևէ հատկանիշով նման են իրար, իսկ նրանցից մեկը չունի այդ հատկանիշը, հետևաբար տարբեր (ուրիշ) է: **8. Զվարթ տրամաբանություն** Ներկայացված խնդիրներն ու առաջադրանքները պարզունակ են առաջին հայացքից, սակայն ունեն այնպիսի ոչ ստանդարտ ձևակերպումներ, որոնք					

				կարող են շփոթության մեջ գցել: Նպաստում են փնտրել այլ լուծումներ և երևույթներին նայել այլ տեսանկյունից: **9. Թվաբանություն և լեզու** Ներկայացվում են այնպիսի առաջադրանքներ որտեղ արտացոլված են թվաբանության և լեզվի առնչությունները: Այս բաժնում այդ առնչությունների հիման վրա ստեղծված առաջադրանքներն ու հետաքրքրաշարժ խնդիրները ապահովում են նաև միջառարկայական կապերը: Ներկայացվում են զանազան գաղտնագրեր, մաթեմատիկական հանելուկներ, ծածկագրեր, ժողովրդական բանահյուսության նմուշների և մաթեմատիկայի առնչությունների բացահայտումներ, մեկը մյուսով ներկայացման ձևով: **10. Գաղտնագրեր, ծածկագրեր** Օգտվելով թվաբանության ընձեռած հնարավորություններից կազմվում են այնպիսի գրեր, որոնց բովանդակությունը կողմնակի անձանց համար անհասանելի են: Ներկայացվում են գոյություն ունեցող /հնարված/ Գաղտնագրերի և ծածկագրերի մի քանի համակարգեր և դրանցով կազմվող օրինակներ: **11. Չափածո խնդիրներ** Ներկայացված չափածո խնդիրներում գաղտնագրվում են թաքնված անճշտություններ, խարուսիկ արտահայտություններ որոնք զտնելու համար երեխաները պետք է ուշադիր կարդան, մտապահեն կարդացածը, գտնեն, թե որտեղ են իրենց մոլորությունը: **12. Քայլաշարերի կազմում** Ներկայացվում են քայլաշարերի (ալգորիթմների) կազման ձևերը և տվյալ քայլաշարերի միջոցով երևույթների մոդելավորմա ինչպես նաև խնդիրների լուծման ձևերը: **13.Թվաբանական չորս գործողությունների հատկությունները** Ներկայացվում է հատկությունների գործնական կիրառումը զանազան հետաքրքրաշարժ վարժությունների, խնդիրների ու առաջադրանքների միջոցով: **14. Բանավոր հաշիվ** Ներկայացվում են բանավոր հաշվի հին ու նոր մեթոդները: **15. Տեղեկագիտության տարրեր** Ներակայցվում են տեղեկագիտության վերջին նվաճումները: Երեխաներին ամենապարզ միջոցներով ծանոթացնում է տեղեկագիտական պարզագույն գիտելիքներին: **16. Բազմությունների տեսության տարրեր** Ներկայացվում են բազմությունները և դրանց հետաքրքրաշարժ հատկությունները, որոնք հնարավորություն կտան երեխաներին ավել խորությամբ ըմբռնել մաթեմատիկական իրողությունները և թվերի աշխարհը: Նպաստում է տրամաբանական մտածողության զարգացմանը ստեղծարար մտածողության ձևավորմանը:					

5	22111120/15	Գրադարանի գրքեր-5, «Հանրամատչելի ֆիզիկա» գիրք	<<Աստղիկ Գրատուն>> ՍՊԸ, ՀՀ	**Նախատեսվում է ձեռք բերել «Հանրամատչելի ֆիզիկա» գիրքը, որը բովանդակությամբ պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին.** «Հանրամատչելի Ֆիզիկայում» պետք է ներկայացվի բնության մեջ, կենցաղում, առօրյա կյանքում և մարդու կողմից ստեղծված տարաբնույթ սարքերում հանդիպող ֆիզիկական երևույթների բացահայտում տեսության ներկայացմամբ և խնդիրների տեսքով: «Հանրամատչելի Ֆիզիկան» պետք է կազմված լինի ֆիզիկայի գործնական և կիրառական ճանաչողություն ունեցող հետևյալ բաժիններից. *- մեխանիկական երևույթներ,* *- մոլեկուլների ֆիզիկա,* *- էլեկտրամագնիսական երևույթներ,* *- օպտիկական երևույթներ,* *- ատոմային ֆիզիկա.* Յուրաքանչյուր բաժնի սկզբում հիշեցման կարգով պետք է տրվեն ֆիզիկայի տվյալ ոլորտի հիմնարար օրենքները, որոնք կարող են նպաստել հարցի վերլուծմանը: Բերված օրինակ-խնդիրները պահանջում են ոչ կաղապարված մտածողություն իսկ երբեմն չունեն միարժեք պատասխան: «Հանրամատչելի Ֆիզիկայում» պետք է լինեն հետաքրքրաշարժ պատկերներ, լուսանկարներ, պարզաբանող գծագրեր, որոնք գիրքը կդարձնեն երևակայությունը խթանող գործոններ: «Հանրամատչելի Ֆիզիկայի» յուրաքանչյուր բաժնում պետք է ներկայացվեն թեմաներ, որոնք բերված են ստորև. **Մեխանիկական երևույթներ** Գրավիտացիոն ուժ; լծակ և պարզագույն մեխանիզմներ; ուժ, ճնշում; իմպուլս; շփում; Արքիմեդյան ուժ; էներգիա, էներգիայի պահապանման օրենքներ; աշխատանք, հզորություն; աերոդինամիկա, հիդրոստատիկա; հարաբերական շարժում; շարժում շրջանագծով; **Մոլեկուլների ֆիզիկա** Փոխներթափանցում; ջերմային երևույթներ; գազերի ճնշումը; Բեռնուլիի օրենքը; հեղուկների եռալը; հեղուկների մակերևույթային լարվածություն, մազականություն; դիմադրությունը հեղուկներում և գազերում; գոլորշիացում և եռում; մածուծիկություն; նյութի ագրեգատային վիճակները **Էլեկտրամագնիսական երևույթներ** Էլեկտրական հաղորդականություն; էլեկտրամագնիսական ինդուկցիա; էլեկտրական և մագնիսական երևույթներ և տատանումներ; երկրագնդի մագնիսական դաշտը; էլեկտրական հոսանքը շղթայի միացման և անջատման պահին; կայծակ և էլեկտրական պարպում; **Օպտիկական երևույթներ** լույսի տարածումը; անդրադարձումը հայելուց; լույսի բեկումը; բացասական բեկման ցուցիչով արհեստական նյութեր, անտեսանելիություն; լույսի բևեռացումը; ինտերֆերենցիա, դիֆրակցիա; խոշորացույց, հեռադիտակ և մանրադիտակ; լազերներ, երանց կիրառությունը, հոլոգրաֆիա;	հատ	1400	5274	7383600	Ոչ շուտ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20-րդ օրացուցային օրը մինչև ս.թ. դեկտեմբերի 15-ը

				Ատոմի ֆիզիկա Նյութերի կառուցվածքը; ամորֆ և բյուրեղային նյութեր; ռադիոակտիվություն, միջուկային ռեակցիա; քվանտային համակարգիչներ:					

<u>1-ին և 5-րդ չափաբաժինների համար</u>

1. Տեխնիկական չափանիշներ.

Չափսը՝ 16.5 x 24,

Տեքստի թուղթը՝ 80 գր. օֆսեթ,

Տեքստի գույները՝ 4 + 4,

Էջերի քանակը՝ 140,

Կազմի թուղթը՝ կավճապատ ստվարաթուղթ 290 գ/քմ,

Կազմի գույները՝ 4+0,

Կազմարարություն՝ թելակար, ջերմասոսինձ, լամինացիա:

2. Ելքային տեղեկություններ՝ Հայպետստանդարտի կոլեգիայի 1996թ. հոկտեմբերի 25-ի թիվ 8 որոշմամբ հաստատված «Հրատարակություն, ելքային տեղեկություններ» ԳՈՍՏ 7,4-95 միջպետական ստանդարտին համապատասխան:

3.Հատուկ նշագրում՝ յուրաքանչյուր գրքի տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝ <<Վաճառքի ենթակա չէ>> բառերը:

4. Գրադարանի գրքերը պետք է լինեն նոր՝ չօգտագործված:

5. Գրադարանի գրքերի բաշխումը՝ Կատարողի կողմից համաձայն կից բաշխման ցուցակի:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ս. Հարությունյան

ԿԱՏԱՐՈՂ

Ս. Չունգուրյան

ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ

Հոդվածի թիվ	Անվանումը	Երևանի քաղաքապետարանի հանարկարթության վարչություն	Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Արագածոտնի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Կոտայքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Արարատի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Վայոց Ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարություն	Ընդամենը	Ծանոթություն
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	15	17	
1	Գրադարանի գրքեր-1	120	110	120	120	120	120	120	120	110	90	100	150	1400	
5	Գրադարանի գրքեր-5	120	110	120	120	120	120	120	120	110	90	100	150	1400	

**Ծանոթություն.* Գրքերի բաշխումը կատարվում է հիմնական դպրոցների միջև:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ն. Հարությունյան

ԿԱՏԱՐՈՂ

Ս. Յունգուրյան

«05» 08 2019թ. կնքված
ՀՀԿԳՆԳՀԱՊՁԲ-19/15-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հազ. դրամ

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ապրանքի անվանումը	Ենթակա են վճարման 2019թ պետական բյուջեի <<Գրադարանային ֆոնդի համալրում>> ծրագրի 5132 հոդվածից, ընդ որում.										Ընդամենը
			1-ին եռամսյակ	1-ին կիսամյակ			9 ամիս			Տարի			
			-	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբերի 20-ը	
1	22111120/11	Գրադարանի գրքեր-1						7383.6	7383.6	7383.6	7383.6	7383.6	7383.6
5	22111120/15	Գրադարանի գրքեր-5						7383.6	7383.6	7383.6	7383.6	7383.6	7383.6

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ն. Հարությունյան

ԿԱՏԱՐՈՂ

Ս. Հունգուրյան